

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

(Հայոց թիգուհի)

Ա. ՏԵՆ Ա. ԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՈՎՈՅՑ

ԹՎՅԱԼ 1881 ԱՄԵՐ

Ն Տ Ս Ս Ա .

7 ՄԱՅԻՍ 1881



Կ. ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1881

ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ Մ. Կ. ՍԱՐՃԵԱՆ ԵԽ ԸՆԿԵՐ
20 Մերձանը Միաշտի Էֆեկտի խանի ներքեւ թիւ 20

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԹԱՅԱՏ 1881 ԱՄ

Ն Ի Ս Ա.

7 ՄԱՅԻՍ 1881

ՆԱԽԱԳԱՀ. — Սրբազն Պատրիարք Հայոց

ԱՏԵՆԱՊԵՏ. — Քրիստոսութ էֆենտի Ղազարոսեան (առժամեայ)

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՄՓՈԽԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՄՓՈԽԱՆՔ

Ա. Վ. ՀԱՅԱԼ

- 1 Կարապետ Եպօ. Սերոբեան
- 2 Սիմոն Եպօ. Սէֆէրեան
- 3 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան Բ Պ
- 4 Կարապետ Ք. Սէթեան
- 5 Մատթէոս Եպօ. Իզմիրեան
- 6 Պողոս Վ. Խոլոսամեան Բ Պ
- 7 Յովհաննէս Ք. Մկրեան
- 8 Գրիգոր » Աճէմեան

Գ. Վ. ՀԱՅԱԼ

- 9 Յակոբ Վ. Ա. Փափաղեան
- 10 Առան Ք. Տ. Սարգսեան Բ Պ
- 11 Խորէն » Փէհլիկան
- 12

Դ. Վ. ՀԱՅԱԼ

- 13 Սուքիաս Ք. Ստեփանեան.

14

15

16 Ե. Վ. ՀԱՅԱԼ

17 Խորէն Արքե. Նար Պէյ Բ

18 Յովհաննէս Վ. Փափաղեան

19 Գարեգին » Թամարեան Բ

20

Բ Բացակայութիւն առաջին :

Բ. 2 Բացակայութիւն երկրորդ :

Բ. 3 Բացելը բանտառոր ողատճառաւ :

(Ա. Վ. ՀԱՅԱԼ)

- Գումզաբու, Կետիկ փաշա
Եւ Գումզաբուի դուրս
- 21 Գրիգոր Պէրալէրեան Բ
- 22 Կարապետ Աղարդմաճեան Բ
- 23 Համբարձում Մագպուլեան
- 24 Մինաս Գափամաճեան
- 25 Սարգիս Աղարէկեան Բ Պ
- 26 Սենեքերիմ Մանուկեան Բ
- 27 Բարթող Քիւրքճիպաշեան
- 28 Գէորգ Ալոտուլլահէեան Բ
- 29 Յ. Մէրեէմ-Գուլի
- 30
- 31
- 32
- 33
- 34
- 35
- 36
- 37

(Բ. Վ. ՀԱՅԱԼ)

- Պէջիկրաշ
- 38 Ալիքսան Խորասանճեան Բ
- 39 Բարսեղ Հալաճեան
- 40 Եկեղիքաբու
- 41 Մկրտիչ Քիւրքճիսանլեան
- 42 Մարտիք Ֆրէնկեան
- 43 Պողոս Երսէրնեան
- 44
- 45 Խալիքատար Ա. Խաչ
- 46

(Դ. Վ. ՀԱՅԱԼ)

- Քուզկունակութ Եւ Խալատիկ
- 70 Ստեփան Պէլլիկճեան
- 70

47 Յ. Շիշմանեան Տօքիլոր

48 Խակիստար Ա. Կարապէտ

49 Միհրան Պահճէդափուլնի

50 Պողոս Թորգոմեան Բ

51 Տրդատ Փափաղեան

52

(Գ. Վ. ՀԱՅԱԼ)

Գասըմ բաղա

53 Գասպար Զէրազ Բ

Բերա

54 Արիլ Ունճեան

55 Գրիգոր Սէլիմիշճեան

56 Գրիգոր Օտեան Բ Պ

57

58

59

60

61

62

Սիջազիւդ

63 Յակոբ Պ. Նորատունի

67 Տիգրան Եռևսուփեան

65 Մկրտիչ Գաղանճեան

66 Նշան Օտեան Բ

67

Պէյզօզ Եւ Ղալարիա

56 Մէքայէլ Մամիկոնեան

(Դ. Վ. ՀԱՅԱԼ)

Քուզկունակութ Եւ Խալատիկ

70 Ստեփան Պէլլիկճեան

70

Դատըգիւղ	ԳԱԽԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ	Մուշ
74		
72		
Նարլըգաբու	401 Կարին	121 Ստեփան Փավաղեան Տիվրիկ
73 Յակոր ԵՀՄՀՆԻՃԵԱՆ ԵԿԵՒՄԱՀԱՐԻ ՍԱՄԱԲԻՈՂ	402 Քէօրանիեա	122 Նշան Գարագուշ Զէյրուն Եւ Մարաշ
74	Անդրիանուպոլիս	123
Թօփափու	103 Նիկոմիդիա	Տրապիզոն
75 Յովհաննէս Մարգարեան Եյուպ Ս. Եղիա Եւ Ս. Աստուածածին	404 Կարապետ Ս. Խւթիւճեան Ակն	124 Պաղտատ 125 Մելքօն Խսկէնտէրեան
76	105 Ղարանիսար	Տիգրանակերտ
Գուրուչէշմէ	106 Արաբկիր	126 Միհրան Զօսպանեան Վան
77 Ասափա Խկիտպաշեան Հիսար Եւ Պօյամի գիւղ	407 Կարասլետ Խաչիկեան Բաղեշ	127 Աղքամար
78 Նոր գիւղ Եւ Սրենիա	108 Պրուսա	128 Հալեպ Եւ Այնրապ
79	109 Գրիստոստուր Ղաղարոսեան Եւղոկիա	129 Սեբաստիա
Պալատ	110	130 Մկրտիչ Յ. Մէլիքեան Ռուսանուգ
80 Տելեմաք Էքսէրճեան	111 Համբարձում Ալանամեան Բալու	131 Կարս
81	112 Յովհաննէս Աղնաւորեաննի Եղեսիա	132 Արրահամ Յ. Այվաղեան Զմշկածագ
82	113 Յակոր Խւթիւճեան Մանճըլիս	133 Համբարձում Սարըբէշիչն. Բ Գաղատիա
83	114	134 Ատանա
84	115 Հաճըն Երգնիա	135 Սղերդ 136 Մատթէոս Ալէքսանեան Եօգնատ
(Ե. Վիճակ)	116 Ռէթէոս Պէրպէրեան Թէքիրտաղ	137 Լողօֆէթ Պալեօղեան Բ Մալարիա
Սամաբիա	117 Տիգրան Գ. Սինանեան Բ Կեսարիա	138 Գէորգ Վարդանեան Խզմիր
85 Ալիքսան Պէշիրեան	118 Գէորգ Գըլըճճեան Խարբերդ	139 Պապի Պապօնեան Եղիպտոս
86 Եղիազար Մէլիքեան Բ	119 Պալըքէսէր	140 Արրահամ Մուրատեան
87 Մինսս Ճաֆճաֆեան Բ	120	141
88 Նազարէթ Շահսպաղեան		
89 Յարութիւն Թիւլեան Բ		
90 Յակոր Արշակ Բ		
91 Սեպուհ Թիւյսիւղեան		
92		
93		
94		
Իասգիւղ		
95 Առաքել Ալթուն Տիւրրի		
96 Ռէթէոս Պէյլիկճեան Բ		
97 Սարգիս Գավուքճեան Բ		
98		
99		
100		

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա. Բացումն Ժողովին ի Ս. Նախագահէն

Բ. Վաւերացումն Երեսփոխանական ընտրութեանց

Գ. Կազմութիւն Մայր Դիւանի

10

ացումն ժողովին ի Ս. Նախագահ

Ամեն. Նախագահ Արքազանը՝ անտելիայ
սբատնառաւ որոշեալ ժամէն քիչ մը ուշ մնա-
լուն համար երեսփոխանոց ներողամտութիւնը
խնդրելին ետե, Ազգային ժողովը բացաւ հե-
տեւեալ Նախագահական ճառով :

ԵՐԵՍՎԻՌԽԱՆՔ Հայոց

Աստուծոյ օրհնութեամբը այս ու
թերորդ անդամ պատիւ ունիմ բանալ

Ազգ. Փողովը . անսակնկալ պատճառաւաւ
զՁեղ սպասել տուի այսօր , ներողամիտ
լերուք . կարողութիւն և զօրութիւն կը
մաղթեմ Ձեղ . արդիւնաւոր էին Ձեր
նիստերը . Աստաւծով՝ Ձեղ մատուցեալ
թաղական և ուսումնական ծրագիրները
ընդ փոյթ կը քուէարկէք , շատ կարեսոր
են անոնք մեր գպրոցներուն և թաղերուն
բարեկարգութեան համար . այս շրջանս
դուք Ձեր պարտքը կատարեցիք . մենք
չկրցանք մեր պարտքը կատարել , անոր
համար վերջին նիստին գրեցի Ձեղ որ
աղատ համարիք զիս Ապրիլի վերջը
Պատրիարքական պաշտօնէն , ու աւելի

առողջ ու աւելի կորովամիտ մէկը ընտ-
ըէք իմ տեղը՝ որ աւելի խնամով ներքին
և արտաքին գործերը նայի, դպրոցնե-
րու և այլն բարեկարգութեան հսկէ :

Ձեր Ատենապետները և Վարչական
Խորհուրդը շատ թախանձեցին զՄեզ որ
մնամք մեր պաշտօնին վրայ , բայց ան-
ձիս առողջութիւնը չներէր պէտք եղա-
ծին պէս ուշով , փութով և կորովով վա-
րել դայս պաշտօն , չկըցինք խօսք հաս-
կըցնել և երկու ամիսի համար խօսք
տուի շարունակել դայն մինչև այս տար-
ուան Յունիս ամսոյ վերջը . այլ անկէ
յետոյ աղատ պիտի համարիք դիս :

Աւելի խօսքեր ընել անօդուտ կը
համարիմ, վիճակնիս յայտնի է : Թէ մեր
Օսմանեան Տէրութիւնը և թէ բարեկամ
Տէրութիւնք կը խօստանան բարւոք վար-
չութիւն և բարեկարգութիւն տալ հա-
յարնակ Դաւառաց : Կըյսւսամք միշտ,
յոյսը Քրիստոնէից սեպհականութիւնն է :

Աշխատութիւն, սէր, միութիւն,
միմեանց վրայ վատահութիւն և Աստ-
ռած պիտի օրհնէ զջեղ, զօրացնէ,
կազդուրէ և Զերջանքերն արդիւնաւոր
բնէ :

ԵԱՅ ՄԸ ԶԱՅՆԵՐ. — ՇՆՈՐՀԱԼԻԱԼ ԷՆՔ
ՇՆՈՐՀԱԼԻԱԼ ԷՆՔ :

Կարգում առ. Ժամեայ դիւանի

Նախագույն ճառին տւարութեն եւ
առ Նորին Արրավնութեան հրաւիրանօք և Ճա-

զավոյ հաճութեամբ առժամեայ Դիւանը կաղ-
մաւեցաւ, Երիցագոյն Երեսփոխաններէն Ղա-
զարսաեան Քրիստոսառուր է, Փէնտի Ատենապետ
և կրտսերագոյններէն Զօդանեան Միհրան է՝
Փէնտի՝ Ատենապետի բազմելով:

Առժամեայ Առենապետէ Փէնտի անմիջա-
պէս Առեանը բացաւ Ժամը 4 ին ի ներկայու-
թեան 49 երեսփոխանաց :

93

Բազակայութիւն

Այսենապետ է Փէնտին՝ անձնուկան տկառութեան օրատմառաւ Տ. Գարեգին վարդապետ Թաթարեանի բացակայութիւնը ժողովին հաղորդեց :

2

Գաւերացումն Երեսփոխանական ընտրութեամբ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Արբագան Նախագույնին բացման ճառէն ետքը, ըստ օրինի պէտք էր երեսիուսանական ընտրութեանց տեղեկադիրները ներկայանար ժողովոյս, բայց ըստ ուսման այդ տեղեկագիրը տակաւին սկառատառ էն, ես ովհափ առաջարկեմ որ այսօրուան միամը 45 օր վերջը տեղի առնենաց. ինչոքէս դիտէք, առաջին նիստերու գործերը զիւաներու ընտրութիւնն է. ուրեմն սպասենք 45

որ ես, կտրելի է որ նար գալիք երեսիովսաւ-
աց մէջ ոյս սրաշտօններուն աւելի արժանա-
սրագոյնք գտնեսին: Երկրարդ՝ Արբագան Պատ-
իսիք Հայրը՝ խր բացման ձառին մէջ, որ
առ համառօտ էր, խր հրաժարականին զբայ

Խօսեցաւ . Ատենակերտոյ Գիւանն այդ մասմէն
իւր տեղեկագիրը բերած է , որ թիշ մը յետոյ
սիրտի կարգացուի :

8. ՄԵՐԵԿՄ-ԳՈՒԼԻ ԷՖ. — Առենապետ
էֆենտին իմ ըսելիքներուս մէկ մասն ըսաւ
արդէն :

Ես նախու չնորհակալութիւն կուզեմ յայտ-
նել Արբազան Պատմորիարք Հօր , որ փառթաց
բանալ Ազգ . Ժողովս , ճիշդ օրինօք սահման-
եալ ժումանակին : Երկրորդ՝ կը փասխարիմ որ
Մայր Դիտանի ընտրութեան չձեռնարկէ այ-
սօր Ժողովս , և յաջորդ նիստն ալ ըստ սովո-
րութեան մի շաբաթէն չգումարելով յետա-
ձըգէ զայն , ինչպէս կըսեր Առենասկետ է Փէն-
տին . միայն թէ այդ յետաձգման միջոցը ա-
միս մ'ըլլայ , որպէս զի նոր ընտրութեանց գո-
նէ մեծագոյն մտան աւարտած լինելով , երես-
փոխանաց թիւն ստուարանայ :

ԶԱՅՆԵՐ. — Կը համաձայնինք, կը համաձայնինք Մէրեէմ-Պուլի էֆէնտիին :

Յ. ՄԵՐԵԿՄ-ԳՈԽԸՆԻ Էմ. — [Յարտւնու-
կելով] Խակ ըստ որում Արքազոն Պատրիարք
Հոգրը՝ բացման ճառին մէջ՝ խր հրաժարման
խնդիրը կը յուղէր, և այս խնդիրն Ատենալե-
տաց զիւանին ու Վարչութեան քննութեանը
նիսթ եղած էր, կառաջարկեմ որ, ինչորէս
ըստ Ատենալետ է Քէնտին, կորդացուի այ-
սօր այդ խնդրոյն վերաբերեալ տեղեկագիրը՝
զոր Ատենալետաց Դիւտնը բերած է Ժողո-
վոյդ, և այս մտաին Ժողովին խր որոշումը տա-
լէ յետոյ ցրուի, յաջորդէ նիտաը ամսէ մը գու-
մօքելու պայմանու. *

ԳԱԲԱՄԱՑԵԱՆ Մ. Էֆ. — Օրոսձղման չեմ
հակառակիր, միայն թէ 15 օր պայմանած ամք
քիչ կը գտնեմ, իսկ մէկ ամիսն ուշ չափ, որով
հետեւ շուրջ թաղերու մէջ ընտրութիւնք արդէն
սկսած են և իրնան մինչև երեք չարամթ. ա-

արտիլ. ուստի ես կառաջարկեմ Երեք շաբախն գումարել Ժողովը :

ԶԱՑՆԵՐ. — Ի՞նչ աննշան տարրերութիւն
րեք շաբաթին և մէկ ամիսին մէջ :

ՓԱՓՍԶԵԱՆ Ս. Էֆ. — Ես կընդունիմ այս
ուաշարկութիւնը . բայց մեծ տարրերութիւն
այ երեք շաբաթին և մէկ ամիսին մէջ , ո-
վլինետեւ բոլոր ընտրութիւնն սկսած են , ինչ-
էս լրագիրներէն հասկցուեցաւ , յառաջիկոց
հերակէ համեմատական քուէարկութիւններն
իտի կատարուին , ըսել է շատ շատ միւս
սրբուն ընսկզութեանց տեղեկագրերն իտւ-
ան , բայց ըստ որում 43 օրէն Համբարձման
օն է , պէտք է Յ շաբաթէն գումարուի Ժո-
ովը : Խակ թէ որ յետաձգելու բացարձակ
էտք կայ , եթէ Վարչութիւն և Ս. Պատրի-
իարք ըսեն թէ մէկ ամիս պայմանաժամ հար-
աւոր է , յայնժամ կը համաձայնինք , բաւա-
ան է որ որոշեալ օրին բացուի Ժողովը :

ԷՒԽՍԵՐՁԵԱՆ Տ. ԷՅ. — Իրա՛ւ, լրագրուց
էջ կարդացինք որ մէկ քանի թաղեր ընտրու-
եանց սկսեր են արդէն, բայց կան թաղեր
ու որ տակածին նոր սիխի սկսին գործի
ուստչին շարաթը բացարձակ քուէ ստացողնե-
երն սիխի ընտրուին, երկրորդին համեմա-
տականաց վրայ քուէ արկութիւնն սիխի կա-
տարուի, երրորդ շարաթ ալ արդիւնքը սիխի
եղեկագրուի, կընէ երեք շարաթ . վաւե-
այման գործողութիւնները չորրորդ շաբթուն
ազիւ կընան լրանալ : Ուստի ես Մէրեէմ-
ուլի էֆէնտիի առաջարկը կերկրորդեմ, մէկ
միաէն գումարելու համար յառաջիկայ նիստը

ԵՌԵՍՈՒԹԵԱՆ Տ. ԷՅ. — ԽՆԴՔԻՐԸ ՄԵԿ ՀԱ-
ԱԹԻ ՄԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ՄԽԱԳ . ՈՐԱԿԵՍ Պ-
ԱՐԾ ԸԼՎԱՅ ՎԼԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ , ՎԱՐՀՉՈՒԹԻՒՆԸ
Ա ԿՐԱՆԿ ԸՆԵԼ Թէ ԹԵՐԵԱՄ ՄԵՂ ՄԵՂ ԸՆՄՈՒ-
ԹԵԱՆՑ ՀԱՃՈՐ ՎԵճԵՐ ԱՐԱՄՈՒՀԻՆ . ՄՅԱ ԱՏԵՆ-
ՆԱԿԱՆԱՐԱՐ ՎԱՐՀՉՈՒԹԵԱՆ ԱԲԻՄԻ ՊԻՄԵՆ , Ա

ուստի ոմանք մէկ ամիսէն հազիւ ոլխտի կրնան
աւարտել ընտրութեան գործը . ուստի լու
կըլլայ որ մէկ ամիսէն տեղի ունենաց յառաջի-
կայ նիստը :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Զը պիտի
խօսիմ գումարման ժամանակին վրայ . ուրիշ
խնդիր մը կայ որ Ազգային ժողովոյ 1877 ի
բացման Ա. նիստին ծագութեած և իւր
լուծութեած ստացած է . բայց թաղերան չէ
հաղորդուած պաշտօնապէս , որպէս զի ընտ-
րական գործողութիւնք բառ այնմ կատարուին :

ԵՌԻՍՈՒԹԵԱՆ Տ. ԷՖ. — [ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԱՎՐԱ]
Այդ խնդիրը վերջը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ես առաջարկեցի որ
նախ յառաջիկայ նատին գումարման օրը
որոշենք, ոստի թողումք այս նոր խնդիրը :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Այս խընդիրը կատարուելիք ընտրութեանց վրայ կրնայի ներգործութիւնն ունենալ. ուստի կարծեմ կրնամ և պէտք է որ խօսիմ : 1874—75 ին Վարչութիւնը հրահանգ մը դրկած է թաղե-

որոց ՅԵՐԵ յօդուածը կը տրամադրէ թէ
երբ ընտրեալ երեսփոխաններէն մին հրաժա-
րի, ընտրողական ժողովը կընդունի անոր հրա-
ժարականը և անմիջապէս անոր յաջորդը կը
հրատիրէ ի նոյն պաշտօն։ Սակայն 1877 ի
բացման Ա. նիստին երբ ընտրութեանց տե-
ղեկագրերն եկան, Եւնի-գալուսի տեղեկա-
գրոց մէջ ըստ նոյն հրահանդի, ընտրեալի մը
հրաժարականը ընդունուած և յաջորդը կոչ-
ուած էր։ այն առեն Ստեփան Վահան Վահանա-
կան դիտողութեամբ բողոքեց ասոր դէմ և
նոյն ընտրութիւնը իրը վերջին բացառութիւն
ընդունիլ առաջարկեց, այն պայմանաւ որ այլ
ևս տեղի չունենայ, և ժողովդ Ստեփան Վա-
հան պատճարկը սոյն դիտողութեամբը ընդու-

Առեւ Ստեփան վաշար նոյնպէս բողոքեց վարչական հրահանգին ընտրեալի մը հրաժարականը ընտրալական ժողովոյ կողմէն ընդունուելու տրամադրութեան դէմ, և դիտեց որ հրաժարականք Ազգային ժողովին գան, զոր նմանակեած շնորհած է եւ կատարեած է

Արդ վերսպիշեալ վարչական հրահանգին
համաձա՞յն պիտի վարուինք ընտրական գոր-
ծողութեանց մէջ թէ՝ 1877 ի բացման Ա.
նիստին եղած որոշման համաձայն, որ ցայսօր
ծանուցուած չէ թաղերուն, այսինքն ընտր-
եալներէն հրաժարող պատահած ատեն նոյնը
ընդունի և յաջորդը պիտի առնու թէ հրա-
ժարականը ուղղակի Ազգային ժողովին պիտի
մերէ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅ. — Կը յուսամ թէ
այդ կնճիռն շուտով կը լուծուի եթէ օրէնքին
որամադրութիւնը յիշեմք : Մեր ներքին կա-
նոնագրին 4րդ. յօդուածին Ա. պարբերութիւ-
նը կը տրամադրէ . « Ժողովը չը վաւերացներ
լայն ընտրութիւնը , որ ընտրեալին յանձնա-
ւութիւնն ապահովող ծանօթագիր չունի ընտ-
րող ժողովին կողմէն , և ընտրելիութեան ոլայ-
մաններն ապահովող ծանօթագիր՝ Պատրիարք
իրազանին կողմէն » :

Արդ թաղ մը երեափոխանական ընտրու-
թիւնը կատարելէ յետոյ ընտրելցն հաճու-
թիւնը սկիտի խնդրէ . երբ ընտրեալը հրաժա-
փի, ընտրողական ժողովը կը պարտաւորի ըն-
տրունիլ նորու հրաժարականը , վասն զի տա-
սաւին վաւերացեալ երեափոխան չէ . և ան-
իջապէս ընտրութիւն կը կատարէ նորա տեղ:
Երեափոխանական ժողովը չը վաւերացներ այն
դրեափոխանը որոյ յանձնառութեան ծանօ-
թագիրն կանխաւ չէ ընդունած : Առանց այս
բացմանին , ժողովն խաղալիկ կը լինի . որով-
ետեւ կրնայ ըլլալ ոփ գոյն վաւերացնելէ ետք՝
դրաժարական գոյ , ինչպէս որ յաճախ կը
դատահէր առաջ . այն առեն հարկ կըլլայ նո-
էն յանձնառութեան որ նոր ընտ-

ութիւն կատարել տաց. ասով թէ Ժողովս և
է Վարչութիւնը առելորդ աշխատաւթիւննե-
ով բեռնաւորած պիտի ըլլան : Այս անտե-
ռթեանց առաջքն առնելու մտօք հաստատ-
ած է մեր ներքին կանոնագրին այն պար-
երութիւնը, զոր քիչ մ'առաջ յիշեցի, և
ոյ արդիւնքն Ժողովս գոհ եղած է :

Ըստ ոյսամ ժողովս վարուած է ցարդ ,
հայն մերժած է հրաժարողին յաջորդական
ռաւելութիւն ռւնեցողն առնելու սկզբունքն .
որ Վարչութիւնն հաստատած էր զիւրու-
եան համար . որով ընտրող թաղերն կը պար-
աւորին նոր ընտրութեան ձեռնարկել , եթէ
նուրբելոց մէջ անմիջալիս հրաժարովք գտնը-
ին :

աթուեր. — Ճիշդը այսպէս է :

ԳԱԲԱՄԱՁԵԱՆ Մ. ԷՅ. — ԻՄ Ըսելվա-
երս Փափազեան էֆէնտին ըսաւ . աւստի ես
օսոր չունիմ :

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՅ. — Տէր Մասթէռ
բրազանին դիտողութիւնը իրաւացի է և Փա-
ազեան էֆէնտիֆ տուած բացարութիւնները
իշդ : Մեք երր Մայր եկեղեցւոյ թաղին մեջ
ընսփոխանական ընտրութիւն կատարեցինք ,
ացարձակ առաւելութեամբ երեք երեսփո-
ան ընտրուեցան . որոց երկուքը հրաժարա-
ան տալով , սրաբառաւորեցանք առաւելազոյն
ուէ առնողներէն երկու անձ գնել անոնց
ուղ , սակայն եթէ յետ հոմեմոտական բուէ-
որկութեան վերասովն հրաժարում սրաբահի ,
առջորդաբար բուէ ստացողը չկրնոր հրաժա-
ռելոյն տեղ անցնիլ , ոյլ հարկէ ըստ օրինի-
որ ընտրութիւն կատարել :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Ես ալ կը
ասկինամ և մանուանդ կը հաստատեմթէ Ազ-
գային Ժողովը 1877 ի բացման տուժին նիս-
տին մէջ որոշած է որ ընտրեալներէն հրաժա-
ռող պրատիկոններ տառեն նոյն հրաժարականը վո-
ւանակ Ծնորողական ժողովէն ընդունուելու ,

գոյին ժողովին գայ , ինչպէս զիտած է Եփան փաշա և ժողովը ընդունած :
Ահա Ստեփան փաշայի խօսքերը և Ժողո-
որոշումը (Բացումն 1877 ամի նիստ Ա. ին
շու 42) :

«Այդ տեղեկագրին մէջ մտանաւոր կէտ
կայ նկատողութեան արժանի , որ Կանո-
գրութեան մէջ որոշուած չէ , և կրնոց
զծմանց տեղի տալ : Եէնիգաբուխ թաղն ա-
ջին անգամ քուէարկութիւն կատարեր է ,
ոչ ոչ քուէից բացարձակ առաւելութիւն
ացեր է . երկրորդ անգամու քուէարկութեամբ
ուերն ընտրուեր են , բայց անոնցմէ մին-
պիչէն էֆէնտի յանձնառու չէ եղեր և
ժմամբ պատասխաներ է Ընտրովական ժո-
ին ծանուցաղբոյն . Ընտրով ժողովը՝ վո-
նակ անոր մերժողական գիրը հոս զրկելու՝
սահմանէն անդին անցեր , Սէրպիչէն է-
նտիփի հրաժարականն ընդուներ և անոր տեղ-
էն ետև առաւելագոյն քուէ ստացողն հրա-
եր է յերեսփոխանութիւն . բայց ո՞ր օրի-
բրեր է այս բանն . Սահմանադրութեան
նօք եթէ առաջին անգամ բացարձակ առա-
ւթիւն քուէից չգոյանայ , երկրորդ անգա-
մ միայն անոնք ընտրեալ են՝ որք առաւե-
լոյն քուէ կստանան : Այս կերպով Սէրպիչէն
էնտի ընտրեալ է բատ մեզ . բայց իր յա-
զը ո՞չ . Ընտրով ժողովը Սէրպիչէն էֆէն-
ի մերժողական պատասխանն առնելէ ետև
խանակ անոր ընտրաւթիւնը բեկանելու՝ Աղ-
յին ժողովիա զրկելու էր . չկայ տեղ մը ու-
տրութիւն մը վաւերացնան համար չը բըն-
ած , աւրուելու ենթակայ ըլլաց : Քանի որ
պիչէն էֆէնտիփի ընտրութիւնը չէ վաւերա-
ծ՝ չկրնար բեկոնիլ , և վաւերացնող իշխա-
թիւնը միայն կրնոյ բեկոննել ընտրութիւն
եթէ հարկ լինի : Եթէ Սէրպիչէն էֆէնտիփի
սժարագիրը մեզ զրկուած ըլլար , ո՞ գիտէ
ուրեւս Եէնիգաբուխ Ընտրով ժողովց հրաւէ-
մերժած ըլլալովն հանդերձ Ազգային ժողո-
վ հրաւիրանացը կը զիջանէր և կընդունէլ
պաշտօնը :

Դարձեալ երես 42 սինուկ ԲՇՀ:

և Մեր կանոնադրութիւնը կը տրամադրէ
որ ընտրելոց յանձնառութիւնն գրաւոր կերպով
ասլահովուի . բայց բնաւ տեղ մը չըսէր թէ
հրաժարող ըլլայ նէ , թո՞ղ Ընտրողական ժո-
ղովն զանի ձգէ և յաջորդն առնէ . մեր երկու
ուղեցոյց ունինք մեր առջին . Ազգային Սահ-
մանադրութիւն և Ժողովիս Կանոնադրութիւնն .
Երկուրին մէջ ալ շկայ այդ տեսակ տրամադ-
րութիւն : Վերջապէս զեղծում մ'է այդ, թէն
ժամանակին Վարչութեան կողմէ հրահանդ
դրկուած ըլլայ այդ մտօր , ինչողէս պահ մ'ա-
ռաջ բառեցաւ : Ասանկ բան մը գործադրելի
ըլլալու համար պէտք է իրր օրէնք՝ Կանոնադ-
րութեան մէջ անցյունել . բայց մինչեւ այն ա-
տեն այդ զեղծումն շարունակել պէտք չէ .
ընտրողական գրութեանց ամբողջ ծրարն Ժո-
ղովիս գալու է : Կրնայ ըլլալ որ Ժողովը յա-
ջողի համոզել զհրաժարողս և հրաժարականնին
ետ առնել առյ . ինչո՞ւ Ընտրողական ժողովն
ինքնին ընդունի հրաժարական մը և հրաժարե-
լոյն տեղ ուրիշ մը առնէ : Ժողովին իրաւանց

դէմ բռնարարութիւն մըն է այս . ուստի կը
կրկնեմ որ ամեն զիր թէ մերժողական և թէ
յանձնառական՝ Ազգային ժողովին բերուին , և
չընդունողաց համար արժան եղած տնօրինու-
թիւնն ժողովս ընէ և կամ հրաժարողաց տեղ
յաջորդն առնլոյ տրամադրութիւնը Կանոնադ-
րութեան մէջ զետեղենք , անշուշտ վիճարու-
նութեան բովին անցունելով :

Եւ դարձեալ երես 14 սիւնակ Ալի և Տիգ,

« Ըստ որում այս խնդիրն իմ դիտողութեանս վրաց ծագեցաւ , հարկ կը համարիմ կարճ վերջարտն մ'ընել : Խրառունք է որ իւրաքանչյար թաղ իւր ընտրեալն ունենայ այն ժողովին մէջ . իրառունք է նաև որ Ազգային ժողովա՝ որդ Ազգն կներկայացնէ , իւր կազմու-

թիւնը համգանակող տարերաց ամեն մէկն Ազ-
դային Ժողովն է որ կը լուծէ կոմ կվառերացնէ,
վասն զի Ազգային Ժողովին բարձր որից հե-

զինակութիւն մը չկոյ . ասի սկզբունք մ'է , որ-
մէ չենք կրնար բաժնուիլ : Սկզբունքին վրայ
համաձայնելէ ետև , գործնականին գալով
կրնոյ այնպիսի եղանակներ դանուիլ որ զըժ-
ուար պարագաներու մէջ գործադրութիւնը
դիւրացնեն , օրինակի համար՝ փոխանակ քուէ-
արկութենէն ետև ընտրելոյն յանձնառութիւնն
իմանալու , ընտրելեաց ցուցակին շնուած ժա-
մանակի և կամ ուրիշ կերպով կրնոյ տնօրին-
ուիլ . բայց հիմոյ խնդիրը գործադրական ե-
ղանակին վրայ չէ , այլ էական կէտին վրայ :
Գալով ընտրական հրահանգին զոր վարչու-
թիւնը զրկեր է թաղերուն , առ այժմ այդ
հրահանգը քանի որ ժողովով վաերացուած չէ ,
չեղեալ կը նկատենք Գիւրբամիսանլեան էֆէն-
տիի ընտրութեան համար , անոր ընտիր հան-
գամանը ճանչցողներէն մէկն ալ ես եմ , և
բարերազդութիւն մ'է մեզ այնպիսի արժանա-
ւոր ընկեր մը ունենալ այս ժողովին մէջ , ուա-
տի կրնանք ընդունիլ այս ընտրութիւնն իբր
վերջին բացառութիւն , ուրիշ անգամ չկըրկ-
նուելու պայմանութ : ո

Առեփան վաշայի այս դիտողութեանց
վրայ առ որոշումն ըրտծ է Ազգային ժողովդ .
[Նոյն նիստ Երես 45] :

և ԵՇՆԻ գարայի ընտրական տեղեկագրին
վրայ դիտողութիւնք սպառելով, Ատենապետ
է Փէնտին Ստեփան Վաշոյի դիտողութեամբն
հանդերձ քուէի դրաւ զայն : Ժողովը միաձայ-
նութեամբ ԸՆԴՈՒՆԵՑ և վաւերացուց կատար-
ուած ընտրութիւնը : »

Արդ քանի որ Ժողովդ ընդունած է Ատե-
փան փաշայի դիտողութիւնը , ընդունած է
ուրեմն թէ հրաժարող ընտրեալին հրաժարա-
կանը Ժողովոյդ պէտք է դայ , և ոչ թէ Ընտ-
րողական Ժողովն ընդուներով դայն , նոր ընտ-
րութիւն կատարէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Մէկ խոռք մը սիրափ
ըստ մ. իրաւունք ունի Տ. Մատթէոս Արքավանի,
ոսց ժողովը կրնայ իւր ոստումբ մասեւ։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅ. — Գործնական կերպով այդ սրացումը մեկնած եմք :

Տ. ՅԱԿՈԲ Վ. ԱՇՈՏ. — Ես ալ տարրեր
հարցում մը պիտի ընեմ. Առհմանադրաթիւնը
կը տրամադրէ որ 75 զրշ. աղգային տուբք
վճարելու կարողոթիւն ունեցողներն միայն
ընարող պիտի կրնան լինիլ, մինչդեռ կը տես-
նուի երթեմն որ 25 զրշ. վճարողներն ալ կը
մասնակցին երեսփոխանական ընարութեանց :
Ասոր թոյլառութիւն ոկէ տք է ընեն արդեօք
Ընտր. ժողովները :

ԳԱԲԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՅ. — Տ. Մատթէոս
Սրբազն բացատրեց թէ Ժողովը այս մասին
Թիւրիմացութեան մէջ ինկած է . բայց յայտնի
է թէ Ժողովոյս նախորդ որոշումը գործնակա-
նը վոխած է , երբ մէկը երեսվոխան կընտ-
րուի թազէ մը ու կը հրաժարի , հարկ չկոյ որ
նորս հրաժարազիրը հոս գոյ , որովհետեւ այն
առեն բնական է թէ Ժողովոյս աւելորդ ոչ-
խատութիւններ պիտի ելնեն . միայն աճոնյ
անունը հոս գտլու է իրր երեսվոխան , որոնք
ընդունելութեան ազգազիր մը յշոծ են Ընտ-
րողական Ժողովը . օրէնքը ոյսովէս կը արա-
մազրէ :

ՄԵՐԵԿՄ-ԳՈՒԼԻ Յ. ԵՅ. — Այս խնդիրն
աղեկ հասկելու և պարզեցն համար պետք է
դայն ի հիմնէ բննել, և անոր ամեն մասուն
քը քրքրել:

Տ. Մատթէաս Եղիշեկոպսի յիշեցուցած
Եւնի-Գարուի Երեսփոխանական ընտրութեան
վաերացման օրահուն՝ Երեսփոխան Ստեփան
Փաշան օրինական գիտողութիւններ ըրեր, և
ընտրութիւնն՝ իրր վերջին բացառութիւն՝ ըն-
դունիլ տռաջարմեր է : Ատենապետ Ի. Գիշնաբին
ու ընտրութեան տեղեկուղին՝ Ստեփան վա-
սոյի գիտողութեամբ հանգերձ քուեի գնե-
լով, ժողովն ընդուներ է զայն, և ընտրու-
թիւնը վաերեր է :

Բայց ի՞նչ են եղել օրինական դիտողներ :

Երբ քննեմք զանոնք մօտէն , կը տեսնեմք
թէ հետեւալ երկու կէտերէն կը բազկանան :
Նախ թէ՝ ընտրութիւնը կատարուած մի-
ջոցին օրինական քուէով ընտրեալներին մին
երբ հրաժարի , Ընտր. ժողովն իրաւունք չու-
նենար անոր հրաժարականն ընդունելու և նո-
րի մը ընտրութեան ձեռնարկելու , վասն զի
ինչուէս երեսփոխանի մ'ընտրութեան վուէ-
րացումը՝ նոյնարէս և անոր հրաժարականի ըն-
դունելութիւնն՝ Ազգ. Ժողովոյ իրաւունքեան
կը պատկանի : — Եատ լու . բայց ովէտք չէ
մունալ որ՝ այլ է ժողովէս վուերեալ Երես-
փոխանի մը հրաժարումն , և այլ է՝ երեսփո-
խանութեան համար քուէ տաած բայց իր
ընտրութիւնը զեռ չվուերացած անձի մը հրա-
ժարումը . վասն զի այս վերջնոյն երեսփոխա-
նութիւնը ամբողջացած զործ մը չէ տակալին :

Եւ արդէն այլովիտի մի պահանջում կը հակասէ օրինաց սգւոյն : Տեսէ թէ ի՞նչ ալէ ու :

Փափաղեան է Փէնտի պաշտօնության՝ մեր
ներքին կանոնագրի 4րդ յօդուածին մէջէն՝ յիշ
չեցուցած պարբերութենին իմացաք որ, երբ
ընտրութեան աեզեկազիր մը գոյ ժողովիս և
անոր մէջ ցուցուած ընտրելոյն յանձնառու-
թիւնն ապահովեալ չինի Ընտր. ժողովոյ կող-
մէն, օրէնքը չներէր որ Ազգ. ժողովս վուերէ
զայն ընտրութիւն։ Ուրեմն Ընտրողական ժո-
ղովը պարտաւոր է՝ ընտրութեան պայմաններին
ամրողացնելու համար՝ նախ հրատիրել զընտր-
եալս որ իրենց յանձնառութիւնն յայտարարեն,
և անոնց յանձնառութիւնն ստուգելէ յետոյ,
տեղեկազրել ընտրութիւնն։ Ուսաի ի՞նչ կընէ
Ընտր. ժողովն։ — բուէից օրինական մէծա-
մասնութիւն ստացող ընտրելոյն կը գրէ թէ՝
ընտրուզաց մածամասնութիւնն զջեղ երեսփոշ-
իսան ընտրեց, հաճեցէք Զեր յանձնառութիւնն
խացնել մեզ, որաէս զի ընտրութիւնը կարե-
նալ աեզեկազրել ձեռնհաս իշխանութեան։
Եւ Երբ այդ անձը՝ փոխանակ յանձնառութեան
կը յայտարարէ թէ ևս շեմ ուղեր, կամ տեմ

կրնար երեսփոխան լինիլ , այն ատեն անոր
ընտրութիւնն՝ իբր չեղեալ՝ իւր նշանակութիւ-
նը կը կորուսանէ , և հարկ կըլլայ զայն առ ո-
չինչ զրելով ուրիշ մ'ընտրել :

Այս օրէնքն այն նպատակաւ հաստատուած
է որ , ընտրութիւններն այս ժողովէս վաւե-
րանալէ յետոյ , հրաժարմանց տեղի մնացած
չըլլոյ և ժողովոյս ժամերն ի զաւը չսպառին ,
անօդուատ ընտրութիւններ վաւերելու և անոնց
հրաժարումները քուէ արկելու դրազումով : Արդ՝
երբ ժողովս յատուկ օրէնք ունի նորընտիր ե-
րեսփոխանաց յանձնառութիւնը չապահոված
ընտրութիւն չվաւերելու , ևնթադրել որ որո-
շում տուած լինի իրեն բերելու այն հրաժա-
րականներն՝ որք ընտրութեանց միջոցին ընտ-
րելեաց կողմէ կրնան գալ յերեւան , ժողովը
մեծ հակասութեան մը մէջ դնելու կը յանդի :

Բայց այս խնդիրը չէ սպարզուելը Եէնի-գարուի ընտրութեան խնդիրն յուղուած սպահուն։ Վասն զի անձնականութիւն չփրաւորելու գգուշաւորութեամբ ամեն ոք չախաւորութիւն պահեր և դիտողութիւնը վիճարանութեան փոխել չեն ուզեր։

Դիտողութեան երկրորդ կէտն այն է թէ՝
ընտրութեանց միջոցին ընտրեալներէն հրա-
ժարով պատահած տաեն, Ընտրողական ժո-
ղով զայն ընդունելով անոր տեղ յաջորդ ա-
ռաւելագոյն բուէ ստացողը չհրաւիրեն, ոյլ
նոր ընտրութեան ձեռնարկեն։ Արդար և ի-
րաւացի բողոք մ'է այս մեծ սխալի մը դէմ.
որ 1874-75 ի վարչական հրահանգէն ծագում
առած էր, վասն զի ազատ բուէարկութեան

դէմ բռնաբարում՝ կար յիշեալ վարչական հը-
րահանգին սպարունակած ոսյդ տրամադրու-
թեան մէջ, որ անշուշտ ընտրութեանց գոր-
ծը դիւրացնելու նալաւակաւ դրուած էր, և
ասկայն հետեանքը չէր նախատեսուած :

Բացատրեմ այդ բռնաբարութիւնը :

Օրինակի համար, ենթադրեմք թէ՝ իմ
թագիս մէջ պնտութեան խորապես

Սարկոսն ըստ օրինի քուէից բացարձակ կամ

Համեմատական սուստելութիւն ստացած՝ բայց
հրաժեշտ տռւած լինի, յիշեալ հրահանդին
տրամադրութեամբ՝ Ընտր. ժողովն անոր տեղ
պիտի կոչէ Թորոսն, որ Մարկոսէն անմիջա-
պէս յետոյ քուէից տռաւելութիւն ստացած է:
Բայց ի՞նչ ստուգութիւն կոց, որ ևս և իւ
համախառներս, որ Մարկոսին համար քուէ
տռւած էինք, երբ զիտնայինք թէ Մարկոս ե-
րեափոխանութիւն չափուի ընդունի, մեր քուէ-
ները չափուի միացնէինք Թորոսէն նուազ քուէ
առնող Պօղոսին վրայ, և կամ այդ ընտրու-
թեան մէջ բնաւին քուէ չառնող որիշ անձի
մը վրայ: Եւ չէ՞ որ այն առեն այդ անձը
պիտի լինէր իրաւամբ ընտրեալ, միացուցած
լինելով իւր վրայ այն քուէներն՝ որբ Մարկո-
սին տրուած էին և սակայն Թորոսին ստացած
բաւէներէն բաղմաթիւ:

Կը տեսնէք որ այս պարագային մէջ մեծ
հաւանականութիւն կա որյ ընտրութեան ար-
դիւնքն ընտրազաց կամքին հակառակ լինի : Եւ
ահա այս պատճառու անհերքելի է զիտովու-
թեան երկրորդ կէտին կարևորութիւնը :

Արդ երբ կը տեսնեմք որ մեզ յիշուեցու-
ցած դիտողութիւնն երկու տարրեր կէտեր կը
պարունակէ, մին մերժելի և միւսն ընդունելի,
ուելորդ է կարծել որ՝ այն օրուան ընտրու-
թեան տեղեկադրին ընդունելութեան քուէն
միանգամայն և այնպիսի որոշում մը պարունա-
կէ իւր մէջ, որ հակառակ լինի տիրող օրինաց
ոգւոյն և դժուարութիւններ հանէ մեր դէմ
այժմ:

Եւ ըստ որում, ինչպէս դիտել տուի, այն օրուան գիտողոթիւններն ընտրոթեան մ'առ թիւ ծագում առած էին, որոյ Ենթակացին անձնակոթիւնը կը խառնուէր խնդրոյն, դիւրին է ըմբռնել որ ինչպէս բնական է նմանօրինակ արարագայից մէջ, փափկութեան նկատում

մի յառաջ եկած է , և առեն որ խոնդիրը չու-
տով գոցելու միտած է , քան թէ անոր մէն մի
կիտերը քննադատելու :

բոյն քուէարկումը նշանակէ թէ՝ Ժողովն որօշում
սուածինի որ ընտրութեանց միջոցին պատա-
հած հրաժարմունք Ընտր. Ժողովներէն չընդուն-
ուին, և նոր ընտրութեան չձեռնարկուելով ոյդ
իրարգի հրաժարականներն այս առուեանը բերուին.
վասն զի հակասութիւն մ'է ոյս մեր ներքին
կանոնագրին : Բայց կը հասկնոմ որ Ժողովը
Արժած ըլլոց վարչական հրահանգին այն տը-
ռամադրութիւնն , որ յաջորդ առաւելագոյն
ուէ առնողն ընդունիլ կը տրամադրէ հրաժա-
ռելցն տեղ , վասն զի ընտրական իրաւանց
ունարարում մ'է այն . . . :

Այս բացատրութիւնք կը բաւեն կարծեմ
անդիքը պարզելու, և Տատթէոս եպիսկո-
պոսի կասկածը վարատելով զինքն համոզելու:

Տ. Մ. ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — [ԱՆԴՎԻՉԵԼՈՎ]

Հեմ համոզուիր թէ նոյն օրն անանկ որոշում եւ-
ղած չէ, բայց կը նդուիմ երբ այսօր Ժողովն իւր
ոյն որոշումը բարեփոխելով նոր որոշում տար:

ՄԵՐԵԿՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՅ. — [Հարունակելով]

նդիրը կարելի եղածին շափ պարզեցի, և ցոյց
ուի որ հրաժարմանց հոս գտղու կէտն անհա-
նձայն էր օրինաց . և ինչպէս յիշեցուցին ի-
է առաջ խօսող պաշտօնակիցքս , մինչև ոյ-
օր ալ հոս չեն բերուած այդ հրաժարականնե-
ր : Միանդամայն Զեր նկատողութեան ներ-
ոյեցի որ զիստզութիւնն ընտրեալ անձի մը
աւերացման առթիւ ծագած լինելով , հուա-
ականաբար փափկութեան դէմ ենթադրուած
ո ոյն օրը վիճաբանութիւնն երկարել , և թէ
ոյն անուշ տեղը կապել ուզուած էր : Ուրիշն
ցոչափը բաւական համարելով մի քանի խօսք
լ 75 դրշի տրոց խնդրոյն համար , զոր Տ. Յա-
նը վարդապետն յարոյց :

Սահմանադրութիւնն երեսփոխանական ընտալութեան համար առ նուազն 75 դրշի տուրքն ապայման դրած էր, և ոյդ ապայմանը գործադրվի էր մինչև Աղդ. արտց նոր օրէնքի հաստատթիւնն , զոր ժողովս իւր վերջոնթեր շահ

անին մէջ քուէարկեց : Այդ թռւականէն ի վեր
տրութեանց ատեն՝ իրը սրայման ընտրութու-
եան՝ ուղղակի Ազգ. տուրք վճարել բաւական
նկատուի , առանց աւելի խատապահանջ ըլ-
լու . վասն զի այս է ընդունուած դրութիւնը :

Գիտէք արդէն որ այս 75 զբարձր խնդիրն
շտ անախորժ տպաւորութիւն ըրած է և
սփոփսանութեան վրայ , և ամեն անգամ որ
ւզուած է այն՝ կարծեաց ընդհանուր հակումն
նարաստ եղած է անոր : Գիտէք նաև որ
կից յառաջ ալ՝ ընտրողաց 75 զրց վճարելու
րողութիւնն էր փնտռուածը , և ոչ թէ ա-
յց 75 զրց վճարած լինելն . ուստի , ըստ իս,
որովական ժողովք պէտք է ընդունին այն
են անձանց քուէներն , որք Սահմանադրու-
տան նշանակած միւս սրայմաններն ունին և
դակի Ազգ . տուրք կը վճարեն :

ԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Շատ յաւ

որ որ այս 75 զուրուշի խնդիրը երևան է . , և ըստ որում դրութիւնը փոխուած է տի , պէտք է զայն թաղերուն հաղորդել , ան զի 75 զրչ տուրդի պատճառաւ իւսկիւր Նոր-թաղի երեսփոխանական ընտրովաց թիւը 83 ի իջած է : Եթէ վերջնական է մասին եղած որոշումը կառաջարկեմ որ միջապէս հաղորդուի թաղերուն , որպէս զի այնմ պատրաստուելով ընտրովաց ցանոն՝ կատարուին ընտրութիւնք :

Բ. ՎԱՐԴ. ԱՇՈՏ — Կը ճայինակցիմ:

ԵՌԻՍՈՒՖԵԱՆ S. Էֆ. — (Առենապետ
որչ. Խորհրդոց) Ես կարծեմ թէ Վարչու-
նը չը պիտի կրնայ համաձայնիլ այդ կարծ-
ութ. Վասն զի 75 զրշ տրոց պոցմանն աղդա-

Ասհմանադրութեամբ տրամադրեալ է, և
որչութիւնն անտեղեակ է որ՝ առանց 75
տրելու՝ ուղղակի Ազգ. տուրք վճարողներն
հասարակ սիխոփ կրնան երեսփոխանական
ոռութեանը մասնակիութեան է Ազգ. ֆորում առ

սլիսի որոշում մը լրած և Վարչութեան հո-
ղորդած չէ ի գործադրութիւն , մինչ ցարդ
ըմբռնուածք սա է թէ ո՛վ որ 75 զրչ վճարե-
լու կարողութիւն ունի , ընտրութեան կրնաց
մասնակցիւլ . և այսպէս ըմբռնուած լինելուն
համար էր որ մայրաքաղաքիս բոլոր թաղե-
րուն մէջ շատ անձեր ընտրովաց ցանկերէն
դուրս ձգուած են , բայց հիմոյ խնդիրը կը
փոխուի : Աւստի ևս կառաջարկեմ որ ասի ա-
պաղացին համար խնդիր լինի , և հիմոյ որ
ընտրութիւնք ոկտած են և գրեթէ կէսը կա-
տարուած , մինչեւ ցարդ ընդունուած դրու-
թեամբ շարունակենք , որպէս զի շփոթու-
թիւններ չյառնեն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ահա կարդը եկած է
որ զուրցեմ, արգին Սահմանադրութեան տը-
րամադրութիւնը ոչ թէ 75 դրչ Աղդ. տուրք
տուողին համար է, այլ 73 դրչ տուրք տալու
կարողութիւն տնեցողին համար. առափ ինչ-
ովէս որ կառարկուի, ընտրութիւններն ինչ
կերպով որ ակած են, այնպէս ուժարտին ժամ-
յաւաջ, և ոյս խնդիրն ապագացին թողլով,
Ատենապետաց Դիւանի տեղեկադրի ընթերց-
ման անցնիմք :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. Էֆ. — Դժբաղդրութ միշտ
այնպիս կը սրատահի որ կարեւոր խնդիրները
որոշ լուծում մը չեն ստանար : Այս 75 զրի
խնդիրն այն կարգի խնդիրներէն է, որոց առ-
ջև ովէտք է ողատկառանօր խօսինք : Քանի
անգամ որ ծագում առած է ժաղավիս մէջ,
խրաբանշիւր երեսփոխանի վրայ առկէ դժոհ

ւելորդ ինչ զայն նկատովով թեան առնուլ խել
չուզուիր , ուստի տառը զանազան մեկնու-
թիւններ և բացառութիւններ տալով վասկել
կը փարձուի : Ըսել է որ օրինաց այդ տրամադր-
ութիւնն զարծնականին մէջ իր լուծումն ա-
ռած է զրեթէ , խել տեսականին մէջ՝ ինչովէ ո-
բացառուեց Մէրեէմ-Գուլի էֆէնոտի , արաց ո-

րինոք խնդրնեն բարեփոխեալ է արդէն . բայց
յայտնապէս ըստած չէ թէ 75 զրչի խնդիրն
բարեփոխեալ է , և պատճառն ըսի քիչ մ'ա-
ռաջ թէ այս խնդրոյն առջև պէտք է որ քիչ
մը պատկառանօք խօսինք , և նկատենք զայդ
մեր Առհմանապրութեան քառակրուսի անիւնե-
րէն մին , որ այսքան ժամանակ խնդիր և աղ-
մակ հանած է աղջին մէջ , որ խորութիւն
գրած է , և որոյ առջև ընտրազք շատ անգամ
ձեռնպահ գոռնուած են :

20366 - 0,00

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱՁԱՆ. — Ժողովը պէտք
է վերաբննէ Առհմանադրութեան ոյս կէտը .
մինչեւ ցարու 75 զրշ տաւրք տուազները կրնացին
քուէ տալ . ասիկայ ամեն մարդու զիտացած
բանն է . բայց հիմայ կըտոիթէ քուէ տալու .
զոզները պէտք չէ զրկել , անորոշ խօսք մ'է
ոյս . և Վարչութիւնը շփոթութեան մէջ կը
ձգէ . ուստի պէտք է ոյս խնդրոյն վերտորեր-
եալ յօդուածը վերաբննել . Եւ ի՞նչ էր Զեր
եղրակացութիւնը , Փախազեան էֆէնտի :

ՓԱ.ՓԱ.ԶԵԱՆ Ս. ԵՅ. — Քառ նախկինին՝
շարունակել ընտրութիւնները : Մենք Վարչու-
թեան խոհեմութեանը կը թողումք այս խըն-
դիրը , բաւական է, որ քուէ տալ ուզողին քուէն
չի մերժուի , առարկելով թէ փոխանակ 75 ի
50 համ 60 տարու կարող է : Ներկայ ընտրու-
թեանց մէջ Վարչութեան խմանութեանը կը
թողումք խնդիրը , ինքը ինչուէս կուզէ թող
այնորիս կատարէ :

ՔԱ.ՓԱ.ՄԱ.ՃԵ.ԱՆ Մ. ԵՅ. — Քաէն տուրբի
հետ կրնա՞յ կոսպովիլ թէ ոչ, սկզբունքի խնդիր
մ'է ոցս, բայց ժամանակը չէ հիմոց լուծելու,
որովհետեւ մեր օրուկարդին մէջ այսպիսի խրն-
զիր մը չունինք այսօր : Խճ.Դիրը 75 դրչի վրայ
է, որուն համար առկէ շատ տուած տառաջորկ
մը ներկայած էմ, որ 57 անդրդ խնդրոց մէջ

կը կենայ դեռ : Երբ ընտրութիւններն արդէն
սկսած և մեծ մասամբ կատարուած են , այն
պահուն չը կրնար խնդիր ըլլալ : Անոնք որ
73 զրց տուրք վճարելու կարողութիւն ունին ,
քուէ արկութեան կրնան մտանակցիլ , զի ոյս-
պէս կը արամազրէ Սահմանադրութեան նշան
յօդուածին հոգին : Արդ , ինչպէս որ կատար-
ուած են ընտրութիւնք մինչեւ հիմոյ , նայնպէս
պէտք է շարտանակին :

ՄԵՐԵԿՄ-ԳՈՒԾԻ 8. ԷՅ. — Եռասուֆեան
է Փէնտի կատարելովէս իրաւունք առնի , վասն
զի՞ իբրև Վարչութեան Առենապետ՝ արիշ
կերպով շէր կրնար խօսիլ , քանի որ սրատառ
խանառուութիւնն ուղղուիլի Վարչութեան վրայ
կը ծանրանոց : Եռասուֆեան է Փէնտիին իրա-
ւունքն այնչափ առէկ կը հասկնամ , մինչ դի
վատահ եմ որ եթէ Վարչութեան Առենապե-
տը շլինէր , անտարակոյս մեզի որէս ովտափ
խորհէր և մեզի ձայնակցէր : Արդարեւ 7օ զու-
րուշի պայմանին բարեփոխման համար Ժողո-
վոյս կողմէ Վարչութեան բան մը հաղորդուած
չէ , վասն զի այս խնդիրն երբէք ուղղուկի ե-
լած չէ Ժողովոյս ատեանն , այլ միշտ ուրիշ
խնդրոյ առթիւ յուզուած ըլլալով , յատուկ ո-
րոշում մը որուած չէ այն մասին : Բայց եթէ
ուշի ուշով քննեմք այն խօսքերն ու դիտողու-
թիւններն , որք այս խնդրոյն առթիւ ստէպ
անցած են այս Ժողովին մէջ , զիւրաւ կը հա-
կընամք որ 7օ զրցի պայմանն իւր դօրութիւնը
կորուած է : Խակ արդ՝ Փափազեան է Փէնտիի
առաջարկը շատ լաւ է . այս խնդիրը Վարչու-
թեան խմանութեանը թողելու է : Մենք կա-
տարեալ վատահութիւն ունինք մեր Վարչու-
թեան վրայ , իրեն կը թողումք , ինչու որ
կըմքանէ օրէնքն ացնողէս թող վարուի , և կը
վասկեմք խնդիրը :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱՁԱՆ. — Ընարութեանց
ժամանակ երբ վէճ պատահի և 75 դրչ տուրք
չշատողները քուէ տալ ուզեն, Վարչութիւնը
ի՞նչ վճիռ պիտի տայ:

ՄԵՐԵԿՄ-ԳՈՒԼԻ 8. ԷՅ. — Վարչովթիւնն
ինչպէս որ կը հռակնոյ օրէնքն այս մասին ,
այնպէս պիտի ընէ , և մեր իրեն չոլիտի հար-
ցընեմք թէ ի՞նչ ըրտու . վասն զի իւր գրայ
կատարեալ վատահութիւն ունիմք , և այսպէս
պիտի գոցենք խնդիրն այսօր : Խոկ երբ որ մը
Վարչովթիւնը դայ խնդիր բերէ այս մասին ,
այն ժամանակ նկատազութեան պիտի առնումք
Վարչովթեան բերած խնդիրն : Խոկ այժմ որ
վասկուլ կացութեան մի մէջ եմք . բուշարկու-
թեանց կիսով չոփի յառաջ դացոծ ըլլալուն
սրատնառու , չեմք ուզեր խնդիր յուղել և
շփոթութիւն յարուցանել . աստի ի գէալ ժա-
մու ուշադրութեան աւնուու համար , առ այժմ
առանց պայմանի Վարչովթեան իմաստու-
թեանը կը թողումք :

ՓԱ.ՓԱ.ԶԵՍԱՆ Ս. ԷՅ. — կը համաձայնի՛մ :

ԵՌԻՑՈՒԹԵԱՆ Տ. ԷՅ.—Թիւրիմացութեան
զի չի տալու համոր մի քանի խօսք ընելէ
աջ՝ նախ շնորհակալութիւն կը յոցանեմ որ
եսփոխան Տեարք բացարձակ վատահութիւն
յոյտարարեն Վարչութեան վրայ և անոր
սատութեան կը թողան խնդիրը, բայց ալէտք
աւ հակցուի ը ոմէպէտ Ազգ, Ֆողովն աւ
առեն աննօդաստ դժոնուած է 75 զուրու-
սրայմանին, սակայն այս մասին որոշում մը
հազորդած Վարչութեան : Եւ Վարչու-
նը՝ ինչպէս յոցարարեցի յիշ մ'առաջ,
ալէս զիտէ թէ 75 զուրուշ վճարելու կա-
զութեան տէր անձինք, իրենց տուրքերը
որած ըլլան թէ ոչ, իրաւոնք ոլիտի տնեւ-
ն ընտրութեանց մասնակցելու : Ուստի ար
և ընդունուած սկզբունքը այս ըլլալով, Վար-
թիւնն այսուհետեւ ալ մի և նոյն սկզբունքէն
ոխտի չեղի :

200866 — *Tanum*, *Svart Länne*, *Brattfors*,

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ — Քառէարկութեանէ առաջ սա պիտի հարցնեմ թէ՝ միթէ իւր պարտքը չճանչցողը պարտազանց չոփտի համարուի՞ , և ուղղակի տուրբ չի վճարողներն իրաւունք պիտի ունենան քուէարկութեան մասնակցիլ :

ՄԵՐԵԿՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՅ. — Պարուքը չը ձանչցողն անտարակոյս պարտազանց է և իրաւունց կիրաւութեանէ դրկեալ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Խնդրոյն սա եղրակացութիւնը թէ՝ ժողովը Վարչութեան իմաստութեանը կը թողու ընտրութեանց գործը , քուէի պիտի դնեմ :

ՀԵՏԵԿԱՐԱՐ ԱՄԵՆԱՎԵՍ Էֆէնտի Խընդրոյն եղրակացութիւնը քուէի դնելով մեծամասնութեամբ ԿԸՆԴՈՒՆՈՒԹԻ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Այժմ Ս. Պատրիարք Հօր հրաժեշտի յայտարարութեան նկատմամբ ԱՄԵՆԱՎԵՏԱԳ դիւանին տեղեկադիրը պիտի կարդացուի :

ԱՏԵՆԵՐ — Շատ լաւ կարդացուի :

Մէրեէմ-Գուլի էֆէնտի բնո՞ւ ելնելով կը նեռնուու ԱՄԵՆԱՎԵՏԱԳ դիւանին յետագոյ տեղեկադիրն :

Վաեմ. ԱՄԵՆԱՎԵՏ Էֆէնտի
Աղդային ժողովոյ

ԱՄԵՆԱՎԵՏԱԳ Դիւանը միանալով կարժական Խորհրդոյն հետ , Աղդ. ժողովոյն նախընթաց շրջանի վերջին նիստին

մէջ , որ 2 Ապրիլի , ըրած որոշման համեմատ ի բննին առաւ Ամեն. Տ. Տ. Ներսէս Ս. Պատրիարք Հօր գրութիւնն , որով կը ծանուցանէր թէ ներկայ Ապրիլ ամսէն յետոյ այլ ևս Պատրիարքական պաշտօն չպիտի կրնայ վարել , և կը խընդրեր որ ժողովդ այն մասին զարժանն արդի կացութեան : Եւ խնդրեց որ Աղդ. ժողովդ բարեհաճի այլ ևս ազատ թողուլ զինքն , արժանաւոր յաջորդ մընտրելով կ. Պոլսոյ Պատրիարքութեան աթոռոյն :

Չեր ԱՄԵՆԱՎԵՏԱԳ դիւանն ու Վարչական Խորհրդութիւնն արդի պարագայից մէջ ամենայն տեսակէտով Աղդին համար անընդունելի գտան Ամեն. Պատրիարք Հօր հրաժեշտն և դիմելով Նորին Սրբազնութեան իրենց կարծիքն հազորդեցին , ըսին թէ Աղդն՝ իւր Պատրիարքին առողջական տկարութիւնը դիտնալով հանդերձ ընդհանուր տրամադրութիւնն մ'ունի պահանջելու որ շարունակէ նա իւր զոհողութիւնն Աղդին ծառայելու համար : Միանդամայն խնդրեցին որ եթէ մասնաւոր ցաւեր ունի Նորին Սրբազնութիւնը , բարեհաճի յայտնել զանոնք , որպէս զի առ Աղդ. ժողովդ մատուցանելի տեղեկադիրն մէջ նշանակուին , և Աղդ. ժողովէդ նկատողութեան կարենան առնուիլ :

Բայց Ս. Պատրիարք Հայրն յայտնեց թէ Պատրիարքական պաշտօնն օր քան զօր ծանրացած է , և իւր անձին առողջական վիճակն այլ ևս զայն տանելու անբաւական է եղած , և թէ՝ իւր հրաժարման բուն պատճառն՝ Աղդին դործերն անթերի և անյապաղ հոդալու համար իւր տկար և խոնջեալ անձին վրայ չկարենալ վստահիլն է :

Նորին Սրբազնութիւնն յաւեցուց նաև թէ՝ ինքն Աղդին վիշտերն ու պէտքերն , ուր որ հարկէ , յայտնած , բա-

ցատրած և իմացուցած է , և թէ՝ Բ. Դըրան կառավարութիւնն ու նոյն իսկ 0 գուստափառ Սուլթանը լիովին դիտակ են անոնց , և կը յուսայ որ բարւոք լուծում մը պիտի տան խնդրայն և հիմնական դարման մը պիտի տանին արդի կացութեան : Եւ խնդրեց որ Աղդ. ժողովդ բարեհաճի այլ ևս ազատ թողուլ զինքն , արժանաւոր յաջորդ մընտրելով կ. Պոլսոյ Պատրիարքութեան աթոռոյն :

Իսկ ով որ ալ լինի յաջորդ Պատրիարքն , նորա պաշտօնին պարտաւորութեանց կատարումը գէթ ներքին դժուարութիւններէ ապահովելու համար պէտք է , ըստ , Նորին Սրբազնութիւնն , որ Աղդն իւր սպասած ծառայութեանց համապատասխան չափով դիւրութիւնները լոնծայէ նմա , կեդրոնական մնտուկին հասոյմն մի քանի պատիկ աւելցնելու միջոցներ ճարելով , գաւառաց Առաջնորդներն ազդեցութեանէ զերծ պահելու համար նոցա ապրուստը կեդրոնէն հոդալով և Աղդին էական խնդրոց ոգին պարագայից զոհելու չափ մանրամասնութեամբ զրադելէ խորշելով :

ԱՄԵՆԱՎԵՏԱԳ Դիւանը խոստացաւ Նորին Սրբազնութեան յայտնած պատճառներն ու Աղդին օգտին համար ըրած դիտողութիւններն հաւատաբարմար ներկայել Աղդ. ժողովոյդ , ընդ փոյթ նկատողութեան առնելու համար : Եւ ի վոխարէն Նորին Սրբազնութեան հաճութիւնն ստացաւ մինչև յտնօրինութիւն Աղդային ժողովոյդ՝ թափուր չժողուլ Պատրիարքական աթոռն և փոքր մի ևս շարունակել իւր զոհողութիւնն :

Չեր ԱՄԵՆԱՎԵՏԱԳ Դիւանն այս ամենը տեղեկագրելով ժողովոյդ , իւր կարծիքն աւ սապէս կեզրակայէ որ ,

4.—Թէև Նորին Ամենապատուութեան 8. Ներսէս Պատրիարքի անձն ոչ-քաջառողջ , և սակայն ներկայ պարագայից մէջ Աղդին օգուտուն և ընդհանութ տրամադրութիւնը կը պահանջեն չընդունիլ Նորին Սրբազնութեան հրաժեշտուն , և խնդրել որ բարեհաճի շարունակել Պատրիարքութեան պաշտօնն , ինչ եղանակաւ որ կարելի է :

2.—Յանձնարարել Վարչական Խորհրդոյ որ Պատրիարքական պաշտօնը ներքին դժուարութիւններէ զերծ պահելու համար Աղդէն սպասուած զոհողութեան և չափաւորութեան մասին Նորին Սրբազնութեան կարծիքին բարձիքները մանրամասնօրէն լսելով , ճշդեալ առաջարկ մի պատրաստէ , Նորին Սրբազնութեան հետ համախորհուրդ , և ժողովոյդ ներկայէ :

3.—Յիշեալ առաջարկը լրջօրէն նկատողութեան առնուլ և օգտակար դատուած ատեն , անմիջապէս գործադրութեան միջոցները տնօրինել :

26 Ապրիլ 1884

8. ՄԵՐԵԿՄ-ԳՈՒԼԻ

9. ԱԼԹՈՒՆ ՏԻՒՐԻ

ՅՈՎՀ. ՔՀ. ՏԿՐԵԱՆ

Կ. Ա. ԻՄԹԻՃԵԱՆ

Ք. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

Դ. ՀՈՎՈՒԵԱՆ

Մ. 20ՊԱՆԵԱՆ

[Յետ ընթերցման]

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ — Ես պատրիարքական պաշտօնին նկատմամբ ձողովին առաջարկութիւն ընելու խոսրեր շըրի :

ՄԵՐԵԿՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՅ. — Այդ խոսրերն իրը Զերը՝ յաստաջ բերուած չեն տեղե-

կոգրոյն մէջ, Ատենապետաց դիւանին եղբաշխութիւնն է այն, Սըբազան Տէր :

ՆԱԽԱԳՈՅ ՍՐԲԱՁԱՆ — Ես իմ ողուտանիս համար դիւրութիւններ տալու խօսքեր ու չըրի :

ՄԵՐԵԿՄ—ԳՈՒԼԻ Յ. Էֆ. — Զեր Սըբազանինը յաջորդ պատրիարքին համար ըրած ոյդ դիւրութիւնները : Եւ մեր տեղեկագրին մէջ ալ այնուէս նշանակուած է :

ՆԱԽԱԳՈՅ ՍՐԲԱՁԱՆ — Երկու ամիս պայմանաժամու համար ողաշտօն, շարունակելու խօսք տուի ես, բայց ոյդ տեղեկագրոյն մէջ սցղովիս բան մը յիշուած չէ :

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Ա. Պատրիարք Հայրն իրօր ոյդ պայմանն առաջարկեց իրեն ներկաւ յացող պատգամաւորութեան, բայց պատգամաւորութիւնը բացատրեց թէ՝ արդի պարագայից մէջ սցղովիս պայմանաժամ չէր կարող սահմանել իւր տեղեկագրոյն մէջ, և թէ իր սկարտաւորէր փոքր մի եւս շարունակել ըսելու : Արդ եթէ խօսք ուզող չիս տեղեկագրին եղանակացութեանց վրայ, բուէի սիւտի դնեմ զանոնք :

ՀԵԿՈՒՄԱՐ Ատենապետ էֆէնտի Ատենապետաց դիւանին տեղեկագրոյն եղբակացութիւնները բուէի դնելով միաձայն հաւանակամքութեամբ լուրջունեցնելու համար :

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Ժողովոյ գոհութիւն և Սըբազան Պատրիարք Հայր ու Հոգութակալութիւնը կը յացանեմ :

ՆԱԽԱԳՈՅ ՍՐԲԱՁԱՆ — Ես միայն երկու ամիս ևս շարունակելու համար խօսք տուի :

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Մենք այսպիսի պարագայից մէջ որոշ պայմանաժամներ չենք կը դիւնդունիլ, երկու ամիսը կինդ ամիս կրտսեց երկու տարի կը ըլլայ, կինդ տարի կը ըլլայ :

Յետոյ Ատենապետ էֆէնտի բուէի դրաւ յառաջիկաց նստի գումարման համար Մէրեկմ—գուրի էֆէնտի ըրած և ուրիշ երեսիութաններու ու Վարչութեան կողմէ երկրորդուած առաջարկութիւնը, որ էր՝ մէկ ամիսէն գումարել զայն : Ժողովը մնձամանութեամբ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ, այն առաջարկը, որոցեց Յունիս 4ին գումարել յառաջիկաց նիստը :

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — [Առ Ետսութեան է ֆէնտի] Վարչութեան Ատենապետ էֆէնտին սկարտը կը համարիմ յիշեցնել որ, ըստ ներքին կոմոնագրութեան՝ Ազգ. Վարչութեան համարատութեանց սպիտակ տեսրակը պէտք էր Դիւանիու յանձնուած ըլլար :

ԵՌԵՆԱԿԱՆ Ս. Էֆ. — Այսու, զիտեմ, և սկսի յանձնուի :

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Ուրեմն կը յուսում թէ յաջորդ նիստին պատրաստ սիւտի ունենամք դիւանին վրայ :

Ատենապետ վարչութեանը ժամը 6 ին :

Ատենապիր Ատենապետ էֆէնտի Ատենապետաց դիւանին տեղեկագրոյն եղբակացութիւնները բուէի դնելով միաձայն հաւանակամքութեամբ լուրջունեցնելու համար :

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Կրօնական գործոց խորհրդական	Դեր. Տ. Սիմօն եպիսկոպոս Սէֆէրեան
Ներքին գործոց	» Տիգրան էֆէնտի Եպուսութեան Ա. Պէնառեան
Յարաբերական գործոց	» Միքայէլ » Մօմճեան
Կրթական	» » Միքայէլ » Մամիկոնեան
Դատական	» » Սերովէ » Աղնաւոլեան
Ցնտեսական	» » Գարեգին » Մէլիք Ա. Պէնառեան

ԿՐՈՆԱՅԻՆ ԱՏԵԱՆ

Դեր. Տ. Կարապետ Եպիսկոպոս Սերովեան	
» Տարեգին Վարդապետ Թաթարեան	
» Յակոբ	» Փափազեան
» Յովհաննէս Քահանայ	Հիւնքեարագէյնտեան
» Տահակ	» Տէր Սարգիսեան

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՏԵԱՆ

Աղէքսանդր էֆէնտի Մէրեէմ—գուրի	
Թովմաս	» Խօրասանճեան
Կարապետ	» Շահպաղ
Պապի	» Պապօեան
Սենէքէրիմ	» Մանուկեան

ՊԵՐՈՒՅՆԱՌԻԹ-ԻՒՆ

ՕՐԱԿԱՐԳ

- Ա. Բացում ժողովյա .
Բ. Խարդումն առժամեայ դիւանի .
Գ. Բացակայութիւն .
Դ. Վաւերացումն երեսփոխանական ընտրութեանց :

Հ. Ա. Հ. Հ. Հ. Հ. Հ. Հ.

Գին 2 դրոշ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՒԱԿԱՆ ՄՆՏՈՒԹԻՆ

ԱԶԴԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԾ ՆԱԽՈՒՑ ՅԱՏԿԱՑԵԱԼ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի և Ալյարիոյ Ա. Կուսաւորիէ
Եկեղեցւոյ բանկալը և Հայ զրավաճառաց քով